ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ԳՆԱՆՇՄԱՆ ՀԱՐՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Հայտարարության սույն տեքստը հաստատված է «ՀրազՋԷԿ» ԲԲԸ Գնումների գնահատող հանձնաժողովի 2021 թվականի նոյեմբերի 04-ի N14/04.11.21 արձանագրությամբ և հրապարակվում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 27-րդ հոդվածի համաձայն, ՀՀ կառավարության 04.05.2017թ. N526-Ն որոշման դրույթների կիրառմամբ

Գնանշման հարցման ծածկագիրը՝ **ՀՋ-ԳՀ- ԳԲ-14/04.11.21-ԱՄ**

Պատվիրատուն՝ «ՀրազՋԷԿ» ԲԲԸ, որը գտնվում է ք.Հրազդան, Գործարանային-1 հասցեում, հայտարարում է գնանշման հարցում, որն իրականացվում է մեկ փուլով:

Գնանշման հարցման ընտրված մասնակցին սահմանված կարգով կառաջարկվի կնքել **ՊԱԶ 32054 մակնիշի երկու ավտոբուսների համար 8 (ութ) հատ գազաբալոնի (յուրաքանչյուրին՝ 4 ական)** ձեռքբերման և տեղադրման պայմանագիր (այսուհետ՝ Պայմանագիր):

Մատակարարման և տեղադրման ժամկետ է սահմանվում **մեկ ամիս՝ Պայմանագիրը կնքելու օրվանից:**

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի համաձայն՝ նմանատիպ աշխատանքների կատարման թույլտվություն ունեցող ցանկացած անձ, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից ունի հավասար իրավունք մասնակցելու սույն գնանշման հարցմանը:

Ընտրված մասնակիցը որոշվում է հայտարարության պահանջներին բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցների թվից՝ նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակցին նախապատվություն տալու սկզբունքով:

Գնանշման հարցման հայտերն անհրաժեշտ է ներկայացնել «ՀրազՋԷԿ»ԲԲԸ, ք. Հրազդան, Գործարանային 1, հասցեով կամ Էլ. փոստ info@raztes.am:

Հայտերի բացումը տեղի կունենա «ՀրազՋԷԿ» ԲԲԸ ք.Հրազդան, Գործարանային-1 հասցեում, 2021թ. նոյեմբերի 22-ին ժամը 11^{00}-ին:

Սույն հայտարարության հետ կապված լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող եք դիմել գնահատող հանձնաժողովի նախագահ՝ Ա. Մնացականյանին, հեռախոս՝ +374 93 93 22 33:

Պատվիրատու՝ «Հրազդանի Էներգետիկ կազմակերպություն (ՀրազՋԷԿ)» ԲԲԸ